

**ԳՅՈՒՂԱՏՆԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ԱՌԱՋՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԶԱՐԳԱՑՎԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Կենտրոնացված կառավարման համակարգից շուկայական հարաբերություններին անցման փուլին բնորոշ են մի շաքր հիմնախնդիրներ, որոնց շարքում իրեն կարևորությամբ առանձնանում են շուկայական պայմաններին ներդաշնակ հարկային քաղաքականության մշակումն ու արդյունավետ հարկային համակարգի ձևավորումը: Տնտեսական գործընթացներում պետության ունեցած դերի վերահսկատավորմանը զուգահեռ նոր հարթություն են տեղափոխվում նաև հարկային քաղաքականության, ինչպես նաև հարկային վարչարարության դերն ու նրա առջև դրված խնդիրները: Անկախ տնտեսավարման համակարգից, հարկային քաղաքականության հիմնական նպատակը պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների հավաքագրումն է: Այս առումով շուկայական տնտեսության պայմաններում կարևորվում է դրա իրականացումն այնպիսի մեխանիզմներով և եղանակներով, որոնք նվազագույնի կհասցնեն շուկայում տնտեսավարող սուբյեկտների վարքագծի և նրանց կողմից ընդունվող որոշումների վրա հարկման ազդեցությունը: Հարկային համակարգի հիմքում ընկած հիմնական սկզբունքները պետք է լինեն հարկային օրենսդրության համատարած կիրառման ապահովումը, հարկային պարտավորությունների ճիշտ գնահատումն ու վարչարարական նվազագույն ծախսերով հարկերի հավաքագրումը: Այլ կերպ ասած, հարկային համակարգի հիմնական խնդիրը պետք է լինի հարկային վճարումների գծով բյուջետային փաստացի մուտքերի համապատասխանեցումը հարկման ներուժային մակարդակին: Ակնհայտ է, որ տնտեսության տարրեր ճյուղեր և ոլորտներ ունեն գարգացման իրենց առանձնահատկությունները, ինչը ներազբան է հարկային քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ տարբերակված մոտեցումների կիրառում:

Տնտեսական զարգացման ներկա փուլում մեծ կարևորություն են ձեռք բերում գյուղատնտեսության ոլորտի հարկման խնդիրները։ Այս առումով բավականին ուշագրավ է տվյալ ոլորտում կուտակված միջազգային փորձը, որի համակողմանի ուսումնասիրությունը և հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունների բացահայտումը կարող են նպաստել հարկման արդյունավետ մեխանիզմների ներդրմանն ու կիրառմանը։

Զարգացած երկրներում զյուղատնտեսության ոլորտը տնտեսության մյուս ճյուղերի նման հարկվում է: Սիածամանակ տվյալ ոլորտին տրամադրվում են որոշակի հարկային արտոնություններ, ինչպես նաև կիրառվում են հարկնան հատուկ ռեժիմներ, ինչը պայմանավորված է զյուղատնտեսական գործունեության այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են՝ սեզոնայնությունը, բնակչիմայական պայմաններից խիստ կախվածությունը, փոքր ընտանեկան արտադրությունի գերակշռությունը և այլն:

Գյուղատնտեսության պրոտում իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է բազմաբնույթ հիմնախնդիրների լուծմանը և միայն ոլորտի անուղղակի սուբսիդավորման գործիքն է: Հարկերի միջոցով կարող են խթանվել կամ սահմանափակվել գործունեության որոշակի տեսակներ (օրինակ՝ բնապահպանական միջոցառումների իրականացումը հաճախ խթանվում է հարկային լծակների օգնությամբ), ինչպես նաև համապատասխան ներգործություն իրականացվել ազգարային ոլորտի կառուցվածքի վրա: Պետք է նշել, որ գյուղատնտեսությունը խիստ զգայուն է ոչ միայն հարկերի, այլ նաև դրանց կիրառման հնարավոր կոմբինացիաների նկատմամբ: Գյուղատնտեսությունում հարկման ֆիսկալ նպատակները զգալիորեն կախված են հարկման օրյեկտի էլաստիկությունից: Այսպես, եթեն ունի չափազանց ոչ էլաստիկ պահանջարկ, ինչի պատճառով եռի հարելի աճը, որպես կանոն, ուղեկցվում է բյուջետային եկամուտների ավելացմամբ, իսկ

հանքային պարարտանյութերի հարկումը ավելի շուտ հանգեցնում է դրանց օգտագործման ժա-
վակների կրծատմանը:

Եվ վերջապես, ազրարային ոլորտում հարկային քաղաքականությունը խիստ զգայուն է լորրիստական գործունեության նկատմամբ: Զարգացած երկրներում ազրարային լորրին ունի մեծ ազդեցություն կառավարության վրա, ինչի պատճառով հարկային արտոնությունները ձեռք են բերում ազրարային սեկտորի սուբյեկտավորման ձև: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ գյուղատնտեսությանը տրամադրվող հարկային արտոնությունները գործնականում չեն դիտարկ-
վում որպես սուբյեկտայի ձև և, համապատասխանաբար, չեն հակասում գյուղատնտեսության
վերաբերյալ ԱՀԿ համաձայնագրերի պահանջներին:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, գրեթե բոլոր երկրներում հարկման մեխանիզմների կատարելագործումն ընթացել է դրանց պարզեցման, հարկատեսակների թվաքա-
նակի կրծատման, հարկման բազայի և դրույքաչափերի նկազեցման ճանապարհով: Այս պարագայում հարկային բարձր դրույքաչափեր գործում են այն երկրներում, որոնց արտադրության կառուցվածքում գերակշռում են փոքր արտադրական միավորները: ԱՄՆ-ում, որտեղ ֆերմանների չափերը մեծ են, իսկ արտադրության արդյունավետությունը՝ բարձր, հարկային համակարգի բարեփոխումներ ընթանում են որոշ արտոնությունների աստիճանական կրծատման ճանա-
պարհով: Բացի բյուջե մուտքագրվող հարկերից, գյուղատնտեսական ապրանք արտադրողները այլ տնտեսավարող սուբյեկտների նման վճարում են նաև սոցիալական վճարներ: Վերջիններիս և հարկերի հարաբերակցությունն էականորեն տարբերվում է ըստ երկրների, ինչը կախված է քնակչությանը ցուցաբերվող պետական աջակցության քաղաքականությունից: Հարկերի նկատ-
մամբ սոցիալական վճարների ամենաբարձր տոկոսային հարաբերակցությունը Ֆրանսիայում է (ընդհանուր վճարումների մոտ 50 տոկոսը): Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ պետությունները կարելի է դասակարգել երեք խմբերի՝ ըստ հարկերի կառուցվածքի: Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրներում հարկերի կառուցվածքում մեծ նշանակություն ունեն անուղղակի հարկերը, բացառությամբ Ֆրանսիայի և Իտալիայի, որոնցում մեծ նշանակություն ունեն սոցիալական վճարները և սպառման հարկերը: ԱՄՆ-ում և Կանադայում նման դերակատարում վերապահված է եկամտահարկին և գույքահարկին:

Գյուղատնտեսության ոլորտում գործող հարկերը, ըստ իրենց բնույթի, բաժանվում են պետա-
կան և տեղական հարկերի: Ընդ որում, եթե առաջինները միանման են, ապա երկրորդները կարող են էականորեն տարբերվել միմյանցից և պայմանավորված են լինում տվյալ վարչատարածքային միավորի խնդիրներով, նրա առանձնահատուկ աշխարհագրական դիրքով և տեղական բյուջեի վիճակով: Պետական հարկերից մոտքերը, որպես կանոն, բաշխվում են ազգային և տեղական մակարդակների միջև, իսկ տեղական հարկերը ամբողջությամբ մուտքագրվում են տեղական բյուջեներ:

Գյուղատնտեսության հարկման համակարգը զարգացած երկրներում հիմնականում սկսեց ձևավորվել հետպատերագմյան տարիներին: Սկզբնական ժամանակաշրջանում այն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնում էր ազրարային ոլորտի՝ այդ փուլում բնութագրական այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք էին՝ ՀՆԱ-ի մեծ տեսակարար կշիռը, գյուղատնտեսության ոլորտում գրադարձության մեծ ծավալները, բնակչությանը պարենային մթերքներով կայուն ապահովման խնդիրը և այլն: 80-ական թվականներից սկսած, գրեթե բոլոր երկրներում սկսվեց հարկային բարեփոխումների նոր փուլ, որը, ի թիվս տնտեսության այլ ոլորտների, ընդգրկեց նաև ազրարային սեկտորը:

Տնտեսական զարգացման ներկա փուլում զարգացած երկրներում գյուղատնտեսությունը տնտեսության մյուս ճյուղերի նման հարկվում է՝ ունենալով որոշակի առանձնահատկություններ: Այս տեսակետից բավականաշահ բարդ խնդիր է որոշել հարկային բերի այն աստիճանը, որն իր վրա պետք է կրի տվյալ ոլորտը: Պետք է նշել, որ զարգացած երկրներում տվյալ հարցը բավակա-

նաշափի խնդրահարույց է: Խնդիրն այն է, որ այդ երկրներում ազրարային ոլորտն օգտվում է պետական և տեղական բյուջեներից տրամադրվող լայն աջակցությունից՝ սուբսիդիաների և տարրեր ծրագրերի տեսքով: Որոշ դեպքերում սուբսիդիաների ծավալը կազմում է ճյուղի համախառն եկամտի մոտ կեսը:

Ուստիմնասիրությունները վկայում են այն մասին, որ զարգացած երկրներում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող հարկային քաղաքականությունը օգտագործում է ուղղակի և անուղղակի հարկերի բոլոր հնարավորությունները: Որպես կանոն, փոխարինող հարկերը շատ հազվադեպ են օգտագործվում՝ հիմնականում փոքր արտադրողների նկատմամբ: Հարկերի օգնությամբ կարգավորվում են ոչ միայն ազրարային արտադրության ընդլայնման ուղղությունները, այլ նաև գյուղական կյանքը: Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտին հարկային օրենսդրությամբ տրամադրվում են քավականաչափ ճկուն արտոնություններ: Դրանք, հիմնականում, վերաբերում են փոքր արտադրողների համար հարկային բեռն թերևացման և հարկային հաշվառման պարզեցման հարցերին: Խոշոր արտադրողները և, հատկապես կորարուատիվ ձեռնարկությունները, ենթարկվում են ընդհանուր ռեժիմով հարկման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսության ոլորտում հարկային բեռն հարաբերականորեն ցածր է, ենթարկվում է, որ հարկային արտոնությունները չեն կարող գգալի արդյունքների հասցնել ոլորտի եկամտային մասի ավելացման առումով:

Զարգացած երկրներում գյուղատնտեսական ապրանք արտադրողների համար կիրառվող հատուկ հարկեր գոյություն չունեն: Գյուղատնտեսության, ինչպես նաև տնտեսության այլ ոլորտների համար գործում են հարկերի հիմնական տեսակները: Գյուղատնտեսության ոլորտում կիրառվող հարկային արտոնությունների հիմնական նպատակը տեխնիկական առաջընթացի, տեխնոլոգիական նորարարությունների, խոշոր կապիտալ ներդրումներ պահանջող միջոցառումների իրականացման խթանումն է:

Զարգացած երկրներում գյուղատնտեսության ոլորտում կիրառվող հիմնական հարկատեսակները

Հարկատեսակ	ԱՄՆ	Ֆրանսիա	Իտալիա	Մեծ Բրիտանիա	Գերմանիա
Եկամտահարկ	+	+	+	+	+
Կորպորատիվ հարկ	+	+	+	+	+
Գույքահարկ	-	+	-	+	-
Խողի հարկ	-	+	-	-	+
Տեղական հարկեր	+	+	+	+	+
ԱԱՀ	-	+	+	+	+
Վաճառքից հարկ	+	-	-	-	-
Սոցիալական վճարներ	+	+	+	+	+

Ընդհանուր առմամբ, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, գյուղատնտեսության հարկումը տվյալ ոլորտի պետական կարգավորման գործիքներից մեկն է: Ըստ տարրեր ուսումնասիրությունների՝ զարգացած երկրներում գյուղատնտեսության ոլորտին տրամադրվում են մի շարք հարկային արտոնություններ՝ որպես պետության կողմից տվյալ ոլորտին ցուցաբերվող աջակցության եղանակ: Ընդ որում նման քաղաքականությունն ուղղված է ոչ միայն տնտեսական, այլ նաև մի շարք սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը: Հարկերի բազմազանությունը հնարևություն է տալիս կարգավորել գյուղատնտեսական արտադրությունը՝ ցանկալի արդյունքների ստացման նպատակով: Միաժամանակ տվյալ ոլորտին տրամադրվող հարկային արտոնությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում վերաբերում են հաշվառման պարզեցմանը և մանր արտադրողների հարկային բեռն թերևացմանը:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի հարկային քաղաքականության միջոցով գործունեության որոշակի տեսակների խթանմանը, ներդրումների ներգրավմանը, արտադրության ցանկալի կառուցվածքի ձևավորմանը և այլն: Նշված հարցերի համակողմանի ուսումնասիրությունը և տեսամերդական համապատասխան իիմքերի իմաստավորումը կարևոր նշանակություն ունեն հատկապես Հայաստանի Հանրապետության համար, քանի որ առաջիկայում գյուղատնտեսության ոլորտը տնտեսության նյութ ճյուղերի նման հարկվելու է ավելացված արժեքի հարկով: Ակնհայտորեն դա ենթադրում է այնպիսի մեխանիզմների մշակում, որոնք հնարավորություն կտան ապահովել ինչպես ֆիսկալ խնդիրների լուծումը, այնպես էլ տվյալ ոլորտում տնտեսական գործունեության արդյունավետությունը:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ հայցորդ

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՈՒԹՈՒՄ

Տնտեսության ընդհանուր ճգնաժամի պայմաններում տնտեսական անկման կասեցման և զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման գործում որոշիչ նշանակություն են ծեռք բերում արդյունավետ հարկային քաղաքականության մշակումն ու իրականացումը: Հատկապես կարևորվում են հարկման պայմանների և ռեժիմների ձևավորման հարցերը, որոնք իրենց խիստ որոշակի ազդեցությունն են ունենալու հասարակական ֆինանսների կողմից իրականացվող գործառույթների վրա: Իրավիճակի բարդությունն այն է, որ անցումային տնտեսությամբ պայմանավորված խնդիրներին զուգահեռ, հարկային մուտքերի հավաքագրմանը կոչված և նշված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պետական ինստիտուտները դեռևս բավարար մակարդակով ձևավորված չեն: Բացի այդ, շուկայական ինստիտուտների բերզարգացածությունը խոչընդոտում է շուկայական տնտեսություններում արդյունավետ գործող հարկման մի շարք կանոնների կիրառումը:

Գոյություն ունի մեկ այլ իմնախնդիր ևս: Անցումային տնտեսությունները վերափոխումների փուլում առավել մեծ ծախսերի կարիք են զգում, պայմանավորված հետևյալ պատճառներով: Մի կողմից, պետությունը ժառանգում է նախկին համակարգի պարտավորությունները, որոնցից կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ հրաժարվել, չնայած դրանք որոշ դեպքերում ոչ արդյունավետ ծախսեր են: Մյուս կողմից, պետական կառավարման համակարգի բարեփոխումները ժամանակ և ծախսեր են պահանջում, և մինչ այդ գործընթացի ավարտը, դրանց գործունեությունը ոչ արդյունավետ է: Եվ վերջապես, շուկայական տնտեսության պահանջները բավարարող և պետության հիմնական խնդիրների լուծումն ապահովող ինստիտուտների ստեղծումը պահանջում է որոշակի ժամանակահատված:

Նախկին Միութենական հանրապետություններում ստեղծված իրավիճակն ունի նաև իր որոշակի յուրահատկությունները: Այդ երկրներում 1960-80-ական թվականներին հարկային եկամուտների հիմնական աղբյուրը ձեռնարկությունների շահույթից վճարումներն էին՝ շրջանառության հարկը, եկամուտահարկը և արտաքին առևտությունների նկատմամբ սահմանված հարկը: Անգամ նման իրավիճակում 80-ականների կեսերին բյուջեի հարկային մուտքերը զգալիորեն նվազեցին: Դա կապված էր, տնտեսության ազատականացման և աշխատանքի մոտիվացիայի բարձրացման փորձերով պայմանավորված հարկային բեռի նվազեցման, ինչպես նաև ծեռնար-